

ԱՆԵԼ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳՐԱԳՔԵՏԻՆ 50-ԱՄԵԱՅ ՅՈՒԹԵԼԵԱՆԸ

Բանաստեղծ Անել. (Տքր. Կարօ Յ. Կարապետեան) ծնած է Երուսաղէմ 1922ին: Իր առաջին բանաստեղծութիւններէն տպուած կը գտնենք Միմն ամսագրի 1942 տարուան թիւերուն մէջ:

Բանաստեղծութեան երեք հատորներ տպուած են. առաջինը՝ "Մուր Ցաւեր" (1945), Երուսաղէմ, երկրորդը՝ "Տեսիլք Գինովի" (1949), Պէյրութ, երրորդը՝ "Պարը Ցոյսին" (1955), Երուսաղէմ:

1955ին Տքր. Կարօ Կարապետեան կը մեկնի Միացեալ Նահանգներ, սրտի մասնագիտութիւնը կատարելագործելու համար Պուրոնի Հարզը Համալսարանին մէջ, ուր կ'աշակերտի աշխարհահոչակ ուսուցիչ եւ սրտարան Փօլ Տատլի Ռւայրին, որուն հետ առաջին անգամ գործադրութեան կը դնեն սրտի Փէյս-Մէյքը գործիքին գիւտը:

Բացի բանաստեղծութենէն, Անելի գրական գործունեութիւնը կ'արտայայտուի հոգերանական վէպով մը՝ "ՈՐԴԻ ՄԱՐԴՈՅ" որ կը հրատարակուի 1975ին, Երուսաղէմ: Ասոր կը յաջորդեն բազմաբիւ տպուած եւ անտիպ հերթուածներ եւ պատմուածքներ՝ "Խնենք Բիւզանդը", "Ես Պիլի Գացի", "Հայր Խորէնը", հւայլ:

Անել տուած է գրական դասախոսութիւններ Երուսաղէմ, Գանատա, Անգլիա, Միացեալ Նահանգներ: Այժմ կ'աշխատի մեծածաւալ վէպի մը վրայ:

Անելն Հատընտիր Քերքուածներու հատոր մը տպուած է 1986ին, նիւ Եօրք:

1992 Օգոստոս 22ին, Երուսաղէմի մէջ, Հայ Երիտասարդաց Միութեան նախաձեռնութեամբ եւ Ամեն Պատրիարք Սրբազն Հօր հովանաւորութեամբ նշուեցաւ Բանաստեղծ-Գրագէտ Անելին 50ամեայ յորբելանը, Ժառանգաւորաց Վարժարանի Սրահին մէջ, հանդիսավա-

րութեամբ Յակոր Անդրէասեանի: Անելի Կենսագրական Գիծերը ներկայացուց իր որդին՝ Տքր. Վիգէն Կարապետեան, Բարիգէն: Ընտրեալ ժերթուածներէն արտասանեցին Օր. Զեփիւռ Պօյանեան, Օր. Գարինէ Գարլանեան, նաև Անելի երկու մանչուկ թոռնիկները, Բարիգէն, Կարօ եւ Թորգոն: Անելի արձակ գրութիւններէն հատուած մը Սրդի Մարդը գիրքէն ընթերցեց Տիկին Ալին Պայեան, իսկ հոգերանական պատմուածքներէն "Խնենք Բիւզանդը", յապատումներով ներկայացուց Տիկին Նորա Նագգաշեան: Ամեն Պատրիարք Սրբազն Հայրը անդրադարձաւ Անելի կեանքին եւ գրական անումին նպաստող ազդակներուն - Երուսաղէմ, ընտանիք, հայեցի դաստիարակութիւն, այլ մշակոյթներու եւ քժշկական մասնագիտութեան ներդրումները, պատմելու եւ վերլուծելու իւրայտուկ ոնք - եւ իր գնահատանքին հետ ներկայացուց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին Օրինութեան կոնդակը, զօր ընթերցաւ Հոգ. Տ. Գուսան Վրդ. Ալիանեան, եւ Անելին լափակէն անցուց Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շքանշանը Վեհափառ Հայրապետէն շնորհուած:

Անել իր շնորհակալութեան խօսքն յետոյ, վերլուծումը կատարեց Հայ Սփիտքի ներկայ կացութեան, եւ պատկերեց թելադրական ցուցմունքներով այնպէս ինչպէս ինք կը տեսնէր "Սփիտքը 21րդ դարու սեմին":

Երեկոյքը աւարտեցաւ Ամեն Պատրիարք Սրբազն Հօր "Պահպանչով": Պատրիարք Սրբազն Հօր "Պահպանչով": Եւ խմբովին երգուած "Հայր Մեր" ով: